Ներդրումային ծառայությունների հետ կապված հնարավոր ռիսկերի հայտարարագիր

Սույն Հայտարարագիրը հանդիսանում է «Բրոքերային ծառայությունների մատուցման և բրոքերային հաշիվների սպասարկման պայմանագիր» անբաժանելի մասը (այսուհետ՝ Պայմանագիր) և ներառում է ռիսկերի նկարագրությունը, որոնք կարող են առաջանալ արժեթղթերի շուկայում գործունեության ժամանակ: Սույն Հայտարարագրին ծանոթանալու փաստը հավաստվում է հաճախորդի կողմից Պայմանագրի ստորագրմամբ: Հաճախորդը գիտակցում և ընդունում է ներքոնշյալ հնարավոր ռիսկերը, ինչպես նաև այլ ռիսկեր, որոնք կարող են ծագել արժեթղթերում ներդրումների ժամանակ:

Արժեթղթերում ցանկացած ներդրում իր բնույթով հանդիսանում է ռիսկային: Արժեթղթերի շուկայում գործարքները կարող են տանել ֆինանսական կորուստների: Ռիսկերի գնահատման, առևտրային ռազմավարության ընտրության, ֆինանսական ռեսուրսների օգտագործման ողջ պատասխանատվությունը կրում է միայն հաճախորդը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ պատվերում նշված պայմաններին համապատասխան գործարքների կատարման դեպքում արժեթղթերում ներդրման հետ կապված ռիսկը կրում է հաճախորդը: Ընկերությունը չի փոխհատուցելու հաճախորդի վնասները, եթե դրանք չեն պատճառվել Ընկերության կողմից անբարեխիղճ վարքագծի արդյունքում:

Հաճախորդը պետք է գիտակցի, որ նախորդ բարեհաջող փորձը կամ այլ անձանց ֆինանսական հաջողությունները կապված արժեթղթերի շուկայում ներդրումների հետ չեն երաշխավորում հետագայում նմանօրինակ արդյունքներ հաճախորդի համար:

Արժեթղթերում ներդրումներ կատարելով՝ ներդրողներն առնչվում են մի շարք ռիսկերի հետ, որոնք տարբեր տեսակի արժեթղթերի համար տարբեր են: Արժեթղթերում ներդրումները չեն երաշխավորվում ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով: Անբարենպաստ փոփոխությունները շուկայում կարող են հանգեցնել անսահմանափակ վնասների, որոնք կարող են հանգեցնել հաշվին սկզբնական մուտքագրված գումարի և ցանկացած այլ լրացուցիչ գումարի կորստին:

Ռիսկը՝ որոշակի դեպքերի, իրավիճակների և գործընթացների ի հայտ գալու հավանականություն է, որը հանգեցնում կամ կարող է հանգեցնել հաճախորդի ակտիվների կորստի:

Ռիսկերի դասակարգում ըստ Ռիսկի գոծոնների՝

- **Սոցիալ-քաղաքական, տնտեսական՝** սոցիալական անկայունություն (օրինակ՝ պատերազմական իրավիճակ, գործադուլ և այլն), քաղաքական կամ տնտեսական արմատական փոփոխություններ, որոնք անմիջականորեն կարող են արտացոլվել ներդրումների իրականացման բնագավառի վրա: Այդ թվում նաև արժեթղթեր թողարկողի անվճարունակություն, դեֆոլտ և այլն:
- **Օրենսդրական փոփոխություններ՝** օրենսդրական իրավական այնպիսի փոփոխություններ, որոնք բերում են արժեթղթերում ներդրումներից հնարավոր կորուստների առաջացման,
- **Քրեական՝** քրեորեն պատժելի արարքներ արժեթղթերում ներդրումներ կատարելիս: Օրինակ՝ արժեթղթերի կեղծում, կեղծ գործարքների իրականացում անօրինական համակարգիչ մուտք գործելու միջոցով և այլն:
- **Էլեկտրոնային առևտրային համակարգերի օգտագործման հետ կապված ռիսկեր**: Այս ռիսկերը կապված են համակարգչային սարքավորումների, ծրագրային ապահովման անսարքության հետ
- **Այլ ռիսկեր**: Վերը թվարկված ռիսկերի ցանկը սպառիչ չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել նաև այլ ռիսկերով:

Ռիսկերի դասակարգում ըստ արժեթղթերի տեսակների՝

- Բաժնետոմսը՝ արժեթղթի տեսակ է, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ) բաժնետիրական ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը: Բաժնային արժեթղթերից (օրինակ՝ սովորական բաժնետոմսերից) ակնկալվող եկամտաբերությունը զգալիորեն ավելի բարձր է, բայց այդ եկամտաբերությունը դրսևորում է բարձր տատանողականություն տարբեր ժամանակահատվածներում: Նպատակահարմար է երկարաժամկետ ներդրումային հորիզոնի համար: Պետք է նշել, որ բաժնետոմսերի շուկայում առկա են ֆինանսական ռիսկեր, դրանք են՝ արժութային ռիսկը, իրացվելիության ռիսկը, գնային ռիսկը, թողարկողի սնանկության ռիսկը:
- **Պարտատոմսը՝** պարտքային պարտավորվածություն է սահմանված ժամկետը լրանալուց հետո ներդրված դրամական միջոցների վերադարձմամբ, որոշակի եկամտի վճարմամբ: Պարտատոմսերը համարվում են զգալիորեն ցածր ռիսկայնություն ունեցող ֆինանսական գործիք, սակայն կրում են շուկայական, իրացվելիության, թողարկողի անվճարունակության և այլ ռիսկեր: Պատմականորն տոկոսային եկամուտ բերող արժեթղթերի (օրինակ՝ պարտատոմսերի) հիմնական առավելությունը ներդրվող կապիտալի համեմատական կայունությունն է, որն ապահովվում է կապիտալի երկարաժամկետ իրական աճի ավելի ցածր

հնարավորությունների գնով՝ պայմանավորված նման արժեթղթերի ինֆլյացիոն խոցելիությամբ:

Ածանցյալ գործիքների հետ կապված ռիսկերը՝

- **Օպցիոն՝** պայմանագիր, երբ ներդրողը ստանում է իրավունք (ոչ պարտավորություն) գնել կամ վաճառել պայմանագրի հիմքում ընկած ակտիվը որոշակի պարգևավճարի դիմաց: Օպցիոնը հնարավորություն է տալիս հեջավորել ակտիվի գնի տատանումների հետ կապված ռիսկերը: Օպցիոնը հանդիսանում է արժեզրկվող ակտիվ, որը ունի գործողության սահմանափակ ժամկետ և այդ ժամկետը լրանալուց հետո կարող է ամբողջությամբ կորցնել իր արժեքը, ինչպես նաև այն դրսևորում է բարձր տատանողականություն տարբեր ժամանակահատվածներում:
- **Ֆյուչերս՝** երկու կողմերի միջև համաձայնություն է, պայմանագրի հիմքում ընկած ակտիվը ապագայում գնելու կամ վաճառելու վերաբերյալ, նախօրոք համաձայնեցված ծավալով և գնով: Այս գործարքներին բնորոշ են զգալի գնային տատանումներ, որոնց արդյունքում հաճախորդը կարող է ինչպես բարձր եկամուտներ ստանալ, այնպես էլ զգալի կորուստներ կրել: Կարճաժամկետ հորիզոնում տվյալ գործիքում ներդրումը պարունակում է մեծ գումար կորցնելու ռիսկ:

Սվոփ, առևտրային ֆինանսական փոխանակային գործարքի տեսակ, որտեղ արժեթղթերի գնման (վաճառքի) գործարքի կնքումն ուղեկցվում է հակադարձ գործարքի կնքմամբ, այսինքն՝ այն գործարքի, որը վերաբերում է նույն արժեթղթի հակառակ վաճառքին (գնմանը) որոշակի ժամկետ անց նույն կամ այլ պայմաններում: Ենթադրվում է վճարումների տարաժամկետ փոխանակություն:
Ռիսկը՝ սվոփի արժեքը հիմնականում կախված է արտարժույթի, տոկոսադրույքների, ապրանքների, բորսայական ինդեքսների, բաժնետոմսերի, պարտատոմսերի գներից: Սվոփի արժեքի վրա ազդող հիմանակա ռիսկը շուկայական ռիսկն է, որը ենթադրում է պոտենցիալ կորուստներ՝ պայմանավորված տոկոսադրույքների, արտարժույթի փոխարժեքների, բաժնային և պարտքային գործիքների գների անբարենպաստ տեղաշարժերով: Որպես հիմնական ռիսկեր կարող ենք տարանջատել սվոփի հիմքում ընկած ակտիվի թողարկողի չվճարման ռիսկը և ենթակառուցվածքային ռիսկը: Վերջինս կապված է դեպոզիտարիաների, բորսաների, հաշվարկաքլիրինգային կազմակերպությունների աշխատանքների հետ, որոնց գործունեությունում ընդհատումները կարող են բերել հաճախորդի ակտիվների կորուստների: